

եամբ Միածնին Աստուծոյ, որ է Աստուած յԱստուծոյ, եկն եւ եղեւ մարդ ի մարդկանէ. իբր ոչ եթէ զընութիւն Աստուածութեանն փոխեաց ինչ, այլ մինչ էր ի սուրբ արգանդի Կուսին, յամենայն յարգանդս սաղմ նկարէր եւ միշտ շինէր զտաճարն իւր Հոգւովն Սրբով»¹⁶ եւ այլն:

Այլթալայի այս հատուածում «յԱստուծոյ» բառից յետոյ դրուած ստորակէտը մենք համարում ենք վրիպում՝ հրատարակչի կողմից, որովհետեւ դրանով կտրուում է քերականական կապակցութիւնը նախադասութեան «որ է Աստուած յԱստուծոյ» եւ «եկն եւ եղեւ մարդ ի մարդկանէ» մասերի միջեւ, իսկ այդ կտրուածութիւնը վերացնելու համար լուսազոյն դէպքում անհրաժեշտ է լի-

¹⁶ Անդ, էջ 74:

նում աւելացնել մի շաղկապ: Ինչպէս երեւում է՝ այդ կտրուածութիւնն զգալով է, որ հրատարակիչը, բնագիրը լատիներէնի թարգմանելիս, անհրաժեշտաբար աւելացրել է «եւ» շաղկապը. «qui est Deus de Deo, et venit et factus est homo ex muliere»¹⁷.

Մենք ԱՀ-ում այդ ստորակէտը տեղադրեցինք «յԱստուծոյ» բառից առաջ եւ դրանով երեւան եկաւ նախադասութեան անթերի ներդաշնակութիւնը՝ առանց շաղկապի. «որ է Աստուած, յԱստուծոյ եկն...»:

Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

¹⁷ Անդ, էջ 75: Մեր կարծիքով՝ «Աստուած յԱստուծոյ» կարգալու մղումն առաջացել է հաւատոյ հանդանակի «Աստուած յԱստուծոյ, լյսս ի լուսոյ» արտայայտութիւնից:

ՍԻՄԱՔԵԱՆ ՄԻ ՏԱՐԸՆԹԵՐՅՈՒԱԾ՝ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԻ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՁԱԳՐԵՐՈՒՄ (ՎԵՑԻՋԵԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ)

Մեր թուականութեան Գ. դարում, երբ Որոզինէս Աղեքսանդրացին ձեռնամուխ էր լինում Հին Կտակարանի յունարէն Եօթանասնից կոչուած Հին թարգմանութեան բնագրական ստուգման ու վերաքննութեան աշխատանքներին, անհրաժեշտ էր համարել նաեւ հաշուի առնել եբրայերէնից յունարէն կատարուած մի քանի նոր թարգմանութիւններ, որոնք կարող էին որպէս եզր ծառայել համեմատութիւնների համար: Այդպիսիներ էին Բ. դարում Ակիւղաս Պոնտացու, Սիմաքոս Սամարացու եւ Թէոդոտիոն Եփեսացու կատարած թարգմանութիւնները:

Որոզինէսի աշխատանքների էությունը կայանալու էր գոյութիւն ունեզոյ չիտական այս հիմունքները միասնաբար ընդգրկելու ատակ մի կառոյց ստեղծելու մէջ: Այդ կառոյցը հանդիսացաւ Վեցիջեանի (Τὰ Ἑξαπλά) անուանեալ նրա նշանաւոր աղիւսակը, որը կազմուած էր վեց սիւնակներից:

1. Եբրայական բնագիրը՝ եբրայական տառերով.
2. Եբրայական բնագիրը՝ յունական տառադարձութեամբ.
3. Ակիւղասի թարգմանութիւնը.
4. Սիմաքոսի թարգմանութիւնը.
5. Եօթանասնից բնագիրը՝ ըստ Որոզինէսի համեմատութեան արդիւնքների.
6. Թէոդոտիոնի թարգմանութիւնը:

Այս աղիւսակի 5-րդ սիւնակի հիման վրայ է, որ հետագայում Պամփիլոս եւ Եւսեբիոս Կեսարացիները կազմեցին Եօթանասնից թարգմանութեան վերանայուած բընագիրը, եւ այս վերջինս է այն «հաստատուն», «ճշմարիտ» եւ «ստոյգ» օրինակը, որից եւ, ինչպէս ասում են մեր պատմական աղբիւրները, առաջացաւ հայկական թարգմանութիւնը:

Յունական Եօթանասնիցի այդ քննական օրինակների, ինչպէս եւ նրանից ծագած հայկական, ասորական եւ այլ թարգմանութիւնների հնագոյն նմուշներից շատերի վրայ յաճախ են երեւում որոզինեան Վեցիջեանի որոշ հետքեր՝ պայմանական նշաններով եւ կամ նրա այս կամ այն սիւնակի ընթերցում-

ների նշումներով: Այդ հետքերը երբեմն շատ ուշագրաւ են՝ սուրբգրային բնագրական հետազոտութիւնների բնագաւառում ունեցած իրենց որոշիչ դերով: Այդպիսի դեպքերը թանկարժէք են նաեւ հենց Վեցիջեանի պատմութեան համար ընդհանրապէս, նըկատի ունենալով, որ Վեցիջեանն իր ամբողջական կազմով չի հասել մեզ, այլ միայն որոշ մասերով՝ հատկոտորներով:

Աստուածաշունչ Մատեանի հայկական թարգմանութիւնը, որը յունական Եօթանասնիցի լուսազոյն ներկայացուցիչներից մէկն է, ԺԳ—ԺԴ. դարերում ընդօրինակուած բազմաթիւ ձեռագրերում կրում է, Վեցիջեանի այդ նշանների հետ, նաեւ լուսանցային որոշ տարբերութեաններ՝ Ակիւղասի, Սիմաքոսի եւ Թէոդոտիոնի թարգմանութիւններից: Այսպիսիներ են՝ Երեւանի Պետ. Մատենադարանի No. 178 (1253—55 թթ.), No. 4243 (1263 թ.), No. 345 (1270 թ.), No. 193 (1271 թ.), No. 179 (1292 թ.), No. 177 (1292 թ.), No. 180 (1295 թ.), No. 353 (1317 թ.), No. 206 (1318 թ.) ձեռագրերը եւ ուրիշներ: Այսպիսի մի օրինակ է նաեւ Ս. Ղազարի Մխիթարեան Մատենադարանի No. 1 ձեռագիրը (1319 թ.), որը եւ հայկական Աստուածաշնչի քննական առաջին հրատարակութեան համար որպէս հիմնական օրինակ է ծառայել Հ. Յովհաննէս Չոհրապետանին (Վենետիկ, 1805 թ.): Այս իրողութեան մասին խօսելու առիթով՝ մենք ուշադրութեան առարկայ էինք դարձրել հետաքրքրական մի փաստ: Դա այն էր, որ մի քանի ձեռագրերում Բ. Թաղաւորութեանց Գ. գլխի 33 տան մէջ միեւնոյն նախադասութիւնը կրկնուել էր երկու տարբերակով.

«Միքէ որպէս մեռանիցի անզգամ՝

¹ Հայերէն ձեռագրերում եղող այս տեղեկութիւնների եւ նրանց վերաբերող յաջորդ մանրամասնութիւնների մասին մի անգամ ընդ միշտ տեսնել մեր «Հայկական մատենագիտութիւն» աշխատութեան Բ հատորը, Երեւան, 1976, էջ 331—334:

մեռաւ Արեհներ, եթէ ըստ մահուան նա-
բաղայ մեռաւ Արեհներ² :

Հետազոտութիւնները ցոյց էին տալիս,
որ այստեղ միակցում էր տեղի ունեցել
միեւնոյն նախադասութեան տարբեր ծա-
ղում ունեցող երկու թարգմանութիւնների,
որոնցից երկրորդը («եթէ ըստ մահուան
Նաբաղայ մեռաւ Արեհներ») բնագրի բուն եւ
միակ ճիշտ ընթերցումն էր, ինչպէս հաս-
տատում էր յունարէն Եօթանասնից թարգ-
մանութեան բնագիրը (ei kata ton thanaton
Nabala apothanetai Arhenh)³, որը աղբիւրն
է հայկական թարգմանութեան: Այս նոյն
ընթերցումն ունեն, բնականաբար, նաեւ
մեր հայերէն հնագոյն օրինակները, ինչպէս՝
Երեւանի Պետ. Մատենադարանի No. 178
(էջ 165ա), No. 345 (էջ 206բ) եւ No. 177
(էջ 147բ) ձեռագրերը, որոնք 1253—1292 թթ.
չըջանում են ընդօրինակուել: Սակայն այս
վերջին երեք գրչագրերը մի նոր երեւոյթ էին
պարզում: Նրանք լուսանցքներում ունէին
«միթէ որպէս մեռանիցի անզգամ՝ մեռաւ
Արեհներ» ընթերցումը, որը պէտք է լինէր
Սիմաքոսի յունարէն թարգմանութիւնից,
ինչպէս ցոյց էր տալիս «Սիւ» նշումը:

Բ. Թագաւորութեանց գրքի տուեալ տան
մէջ հայերէն ձեռագրերով յայտնուող այս
փաստը յայտնի⁴ էր արդեօք յունարէն Եօթա-
նասնիցի բնագրային պատմութեան մէջ: Այս
հարցման պատասխանն՝ սպասելի էր գտնել
Վեցիջեանում, բայց նրա բնագիրն, ինչպէս
ասուեց, մեզ հասել է միայն հատակոտորնե-
րով: Բենեդիկտեան գիտնական B. de Mont-
faucon-ն ի մի էր հաւաքել այդ հատակոտոր-
ները՝ իր հանրածանօթ հրատարակութեան
մէջ⁵:

² Երկու տարբերակներն իրարից զանազանելու
համար՝ առաջինը տուեցինք արամեան տառերով, իսկ
երկրորդը՝ սովորական տառերով:

³ Տես «The Old Testament in Greek according
to the Septuagint, edited... by Henry Barclay
Swete», vol. I, Cambridge, University Press, 1887,
p. 618.

⁴ «Hexaplorum Origenis quae supersunt, multis
partibus auctoria, quam a Flaminio Nobilio et
Joanne Drusio edita fuerint. Ex manuscriptis et
ex libris editis eruit et notis illustravit D. Ber-
nardus de Montfaucon, monachus Benedictinus e
Congregatione S. Mauri», vol. I—II, Parisiis, 1713.

Այս աշխատութիւնը նոյնութեամբ արտատպուել
է J.-P. Migne-ի հիմնած յունական յայտնի մատե-
նաշարում՝ PG («Patrologiae cursus completus,

Նշենք, որ այս հատակոտորների միջա-
վայրում խիստ թերի է Բ. Թագաւորութեանց
Գ. 33 տանը վերաբերող տողը, ուր պահ-
պանուել են միայն 1-ին եւ 5-րդ սիւնակները,
իսկ 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 6-րդ սիւնակներն
անհետ կորած են, հետեւաբար՝ դատարկ են
նաեւ Ակիւղասի, Սիմաքոսի եւ Թէոդոտիոսի
թարգմանութիւնները ներկայացնող սիւնակ-
ները⁶:

Մեր հարցում մեզ օգնութեան է գալիս
5-րդ սիւնակը, ուր տեղադրուած ենք գըտ-
նում նախ Եօթանասնիցի հիմնական ընթեր-
ցումը՝ «ei kata ton thanaton Nabala» (եթէ
ըստ մահուան Նաբաղայ), եւ ապա՝ մի
տարբերակ, որը հենց մեր որոնածն է՝ «μη
ως αποθνήσκει ἄφρων» (միթէ որպէս մեռանիցի
անզգամ):

Սակայն ըստ ինքեան տարօրինակ էր, որ
այս տարբերակը, եթէ տարբերակ էր,
գտնուէր 5-րդ սիւնակում, որը Եօթանաս-
նիցի հարազատ ու հիմնական ընթերցում-
ների տեղն էր, իսկ տարբերակների տեղերը
միայն 3-րդ, 4-րդ եւ 6-րդ սիւնակներն
էին: Այս տարօրինակութեան պատճառն այն
էր, որ «μη
ως αποθνήσκει ἄφρων» տար-
բերակը աւերուած Վեցիջեանի բեկորների
մէջ չէ, որ յայտնաբերուած էր, այլ յունա-
րէն Եօթանասնիցի մի գրչագրում եւ, որպէս
ծաղումով անծանօթ տարբերակ, մուծուած
էր 5-րդ սիւնակի մէջ: Montfaucon-ը, հա-
մապատասխան ծանօթագրութիւնների բաժ-
նում, որպէս աղբիւր ցոյց էր տալիս
Կոյիսիլեան Մատենադարանում գտնուող
յունարէն Եօթանասնիցի ձեռագրերից երկ-
րորդը՝ Codex Coislinianus alter⁶, իսկ այս
աղբիւրի մասին՝ տեղեկատու բաժնում ա-
սում էր. «Codex alter Coislinianus X. saeculi,
egregiae notae, unde multa excerpimus»⁷:

series graeca», t. XV, XVI—1, XVI—2 et XVI—3,
Parisiis-Turnholti, C. Delarue-ի և C. V. Delarue-ի
հրատարակութեամբ:

⁵ De Montfaucon, t. I, p. 321. Նաեւ PG, t.
XVI—1, p. 27—30.

⁶ De Montfaucon, t. I, p. 322. Նաեւ PG, t.
XVI—1, p. 34.

⁷ De Montfaucon, t. I, p. 273. Նաեւ PG, t.
XV, p. 1267.

Յունարէն այս գրչագրի մասին տես նաեւ De
Montfaucon-ի հետեւեալ աշխատութիւնը. «Bibli-
otheca Coisliniana olim Segueriana, sive manus-
criptorum omnium Graecorum quae in ea
continentur accurata descriptio», Parisiis, 1715.

Ուրեմն՝ յունարէն այս գրչագիրը միակն
էր, որ ունէր խնդրոյ առարկայ տարբերակը:
Սակայն, այս ստոյգ տեղեկութեան հետ
միասին, անստոյգ էր մնում մի հարց:
Տուեալ գրչագրում «μη
ως αποθνήσκει
ἄφρων» ընթերցումը «ei
kata ton thanaton
Nabala»-ի փոխարէն հանդէս եկող մի նո՞ր
ընթերցում էր, թէ պարզապէս լուսանցքում
նշուած մի տարբերակ, ինչպէս էր մեր հայե-
րէն վերոյիշեալ գրչագրերում: Այս կարեւոր
պարագայի նշումը դուրս էր մնացել Mont-
faucon-ի ուշագրութիւնից:

Ի խնդիր այս նրբութեան՝ մենք դիմե-
ցինք Վեցիջեանի քննական նորագոյն հրա-
տարակութեանը, որ կատարել է F. Field-ը:
Վերջինս Բ. Թագաւորութեանց գրքի տուեալ
տան կապակցութեամբ նոյնութեամբ որդե-
գրում է Montfaucon-ի տուեալները եւ խնդ-
րոյ առարկայ տարբերակի համար ցոյց տալիս
նոյն Cod. Coisl. alter-ը, բայց՝ «չնայելով ու-
նչելով, որ գրչագրում բնագրէ ընթերցումը
Եօթանասնիցի յատուկ «ei
kata ton thanaton
Nabala» (եթէ ըստ մահուան Նաբաղայ) ըն-
թերցումն է, իսկ «μη
ως αποθνήσκει ἄφ-
ρων» (միթէ որպէս մեռանիցի անզգամ)
տարբերակը լուսանցագրութիւն է⁸, ճիշտ
այնպէս, ինչպէս է մեր հայերէն գրչագրե-
րում, միայն այն կարեւոր տարբերութեամբ,
որ մինչ մեր գրչագրերը տեղնուտեղը նշում
են տարբերակի հեղինակի անունը՝ Սիմաքոս,
յունարէն գրչագիրն անգիրտանում է այդ
պարագան. եւ արդէն այդ է պատճառը, որ
Montfaucon-ը եւ, նրա հետեւողութեամբ,
Field-ը, չկարողանալով որոշել, թէ այդ
տարբերակը Վեցիջեանի 3-րդ, 4-րդ եւ 6-րդ
սիւնակներից ո՞ր մէկին կարող էր պատկա-
նել, հարկադրաբար տեղադրել էին 5-րդի
մէջ, որը նրա տեղը չէր:

Արդ՝ Եօթանասնիցի յունարէն յայտնի
գրչագրերի շարքում Cod. Coisl. alter-ը,
որը Ժ. դարից է, առ այժմ միակն է, որն
ունի այս տարբերակը: Այդ մասին է վկայում
նաեւ տարբերակում գտնուող ἄποθνήσκει

⁸ Տես «Origenis Hexaplorum quae supersunt,
sive veterum interpretum Graecorum in totum
Vetus Testamentum fragmenta. Post Flaminium
Nobilium, Drusium, et Montefalconium, adhibita
etiam Versione Syro-Hexaplatari, concinnavit,
emendavit, et multis partibus auxit Fridericus
Field», t. I, Hildesheim, Georg Olms Verlags-
buchhandlung, 1964, p. 552.

եւ ἄφρων բառերի բացակայութիւնը Եօթա-
նասնիցի ընդհանուր համարաբառում, որ է՝
«A Concordance to the Septuagint and the
other Greek Versions of the Old Testament
(Including the Apocryphal Books), by the
late Edwin Hatch, M. A., D. D. and Henry A.
Redpath, M. A., assisted by other Scholars»
(Graz-Austria, Akademische Druck- u. Ver-
lagsanstalt, 1954, Vol. I—II). Չմոռանանք, որ
այս հրատարակութեան մէջ հանգամանօրէն
հաշուի են առնուած Եօթանասնիցի յունարէն
բնագրի հետ առընչուող բոլոր տուեալները,
ներառեալ՝ վեցիջեան-երբայականները:

Այսպիսով՝ հայկական ձեռագրական
տուեալների միջոցով վերայայտնուած է որո-
գինեան Վեցիջեանի կորած բեկորներից
մէկը. Բ. Թագաւորութեանց Գ. 33 տանը
վերաբերող տողի 4-րդ սիւնակը, որը բաց
էր մնում մինչեւ այժմ, լրացուած է սի-
մաքեան «μη
ως αποθνήσκει ἄφρων» (միթէ
որպէս մեռանիցի անզգամ) տարբերակով:

Այսքանը՝ Վեցիջեանի պատմութեան
համար:

Վերագտնանք, սակայն, հայերէն գրչա-
գրերին: Վերեւում տեսանք, որ հայկական
թարգմանութեան հարազատ ընթերցումը
«եթէ ըստ մահուան Նաբաղայ» էր, բայց
գրչագրերից երեքը, որոնք հայերէն գրչա-
գրերի հնագոյն վիճակն են ներկայացնում,
լուսանցքներում ունէին «միթէ որպէս
մեռանիցի անզգամ» տարբերակը: Այժմ
աւելացնենք, որ հետագայ ժամանակների
ընդօրինակութիւններից շատերում սիմաք-
եան այս ընթերցումը լուսանցքներից անցել
է բնագրի մէջ՝ համատեղուելով նախկին՝
հարազատ ընթերցումի հետ: Այսպէս՝
երկու ընթերցումներն արդէն համատեղուած
են Երեւանի Պետ. Մատենադարանի No. 180
ձեռագրում (էջ 138բ), որը 1295 թուականից
է, եւ No. 353 ձեռագրում (էջ 152ա), որը
1317 թուականից է: Այսպէս եւ՝ ուրիշ շատ
ձեռագրերում. բաւական է ասել, որ Աս-
տուածաշնչի Ձոհրապեան հրատարակութեան
համար օգտագործուած ութ ձեռագրերն
անխտիր բոլորն էլ ունեն նոյն երկու տարբե-
րակների համատեղուած ընթերցումը⁹: Այս
երեւոյթի հետ պէտք է յիշել եւ այն, որ

⁹ Հմմտ. «Աստուածաշունչ մատեն» (հրատ.
Հ. Յովհ. Ձոհրապեանի, միհատորեակ), Վենետիկ,
1805, էջ 194:

Երեւանի No. 206 ձեռագրում, որը 1318 թուականից է, սիմաքեան տարբերակը լուսանցքից անցել է բնագրի մէջ՝ փոխարինելով նախկին ընթերցմանը, իսկ վերջինս դուրս է բերուել լուսանցքի վրայ (էջ 131բ)։ Հաւանաբար կը պատահեն այսպիսի ուրիշ ձեռագրեր եւս։

Սրանք են սիմաքեան նորայայտ տարբերակի կենսագրական գծերը՝ հայկական գրչագրերում։

Հովիւուդ, ապրիլ 1982 թ.

Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

ՀԱԶՈՒԱԳԻՒՏ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԻԹԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ
1801—1850*

* Հմմտ. Դաւթեան Հայկ. Հայ Գիրքը 1801—1850 թուականներին, Մատենագիտութիւն։ Երեւան 1967։ Իբրեւ խորագիր դրած ենք տպագրութեան տարին, տպագրութեան վայրը, Վիեննական Միֆարեան Մատենադարանի գրահամարը։ Շարուածքի մեծութեան մէջ նկատի չէ առնուած իջակալութիւնը եւ յաջորդ էջի նախազանգը։

1801

1801 — Կ. ՊՈԼԻՍ — Ա/991 եւ Է/123

ՍԱՂՄՈՍԱՐԱՆԻՆ ՍՐԲՈՅ ԴԱԻԹԻ ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԳԱՐԻԻ ՀՈԳԵՆՈՒԱԳ ԵՐԳՈՅՆ ԻՄԱՍՏԻՅ, ՆԱԽ՝ ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ, ԵՒ ՉԱՆԱՋԱՆՈՒԹԻՒՆ ԻԻՐԱՔԱՆՉԻՐՈՅՆ ԴՅՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ։ Տես Դաւթեանի թիւ 10ը։

Մեր երկու օրինակներն ալ նոյն տարուան տպագրութիւններ են, սակայն, որքան կ'երբելի, նոյն տարուան մէջ գործու ենեցած է կըրկին տպագրութիւն։ Տարբերութիւններն են. էջ՝ 4՝ տարբեր պատկերներ, էջ 18, 19, 22, 23, 26, 27, 30, 31՝ կը պակսին Է/123ի մէջ սողադարձի նախազանգերը։

1803

1803 — ՌՄԾԲ — Կ. ՊՈԼԻՍ — Բ/302

ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ՈՐ ԿՈՉԻ ՊՂՆՁԷ ՔԱՂԱՔ ԵՒ ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ ԵՒ ՕԳՏԱԿԱՐՔ՝ ԽԻԿԱՐԱՅ ԻՄԱՍՏԻՆՈՅ ԵՒ ԱՅԼ ԲԱՆՔ ՊԻՏԱՆԻՔ։

Տպագրեցեալ ի Հայրապետութեան Գերագահ Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի Տեառն Դաւթի Սրբազան Կաթողիկոսի Ամենայն Հայոց։

Եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տեառն Թէոդորոսի Երջանկափայլ Վարդապետի։

Վեհափառ Հրամանաւ Մեծի Արքայանիստ Մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսի Սրբազան Պատրիարքի Տեառն Յօհաննու Աստուածաբան կոչեցեալ վսեմարան Բարունապետին։

Ի Թուին Հայոց՝ ՌՄԾԲ Սեպ. Թ., Ի Տըպարանի Յօհաննիսեան Պօղոսի։

Էջ՝ 263։ ԳՐՈՒԹԵԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 7.5×12.5, զարդարուն շրջանակի մէջ։ ՊԱՏԱԿԵՐ՝ էջ 2։ ՃԱԿԱՏԱԶԱՐԳ՝ էջ 3, 61, 77, 90, 135, 164, 184, 225, 253։ ՎԵՐՋԱԶԱՐԳ՝ էջ 60, 163, 183, 262։ ՀՐԵՇՏԱԿԱԳԻՐ—ՄԱՐԳԱԳԻՐ՝ էջ 3, 61, 77, 90, 135, 164, 184, 225, 253։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՏՊՈՂԻ Էջ 263՝ Շնորհիւ եւ ողորմութեամբն ... յանկ էլեալ աւարտեցաւ սպունն պատմութեան գրքոյս, որ կոչի՝ ՊՂՆՁԷ ՔԱՂԱՔ։ Ա՛րդ՝ ո՞վ բարեմիտ ընթերցող սորին. ի հանդիպիլն ձեր սոյնոյ գրքեկանս յիշեսլի՛ք ի Քրիստոս յոյսն մեր բնաւիցս, զձերունի հայրն իմ զՏիրացու Յօհաննէսն, եւ զիս զորդի նորին զՏիրացու Պօղոսս՝ հանդերձ բարեջան եւ բաշ(զ)մաշխատ որդւովք իմովք Տիրացու Աստուածատուրիւ եւ Տիրացու Գէորգաւ, որք շարեցին զէրբս կապարեայս։ Յիշեսլիք եւ զմշական գործարանիս՝ զԲալուցի Աւետիսն եւ զՄեբաստացի Մկրտիչն, եւ զուք յիշ.։

1803 — ԱՆՅԱՅՏ — ԺԱ/1115

(ՍԱՂՄՈՒՔ ԴԱԻԹԻ) Մեր օրինակին մէջ կը պակսի տիտղոսաբերքը, եւ էջեր՝ 1—2, 15—18, 31—32, 215—218, 241—242, 255—256։

Էջ՝ 330։ ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 8.5×12.5 զարդարուն շրջանակի մէջ։ ՊԱՏԱԿԵՐՆԵՐ՝ էջ 34, 72, 112, 146, 184, 254։ ՃԱԿԱՏԱԶԱՐԳ՝ էջ 3, 35, 73, 113, 147, 185, 219։ ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳԵՐ՝ էջ 3, 35, 113,